



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670 էլ. փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
170ԳՈՍՏՈՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 109

23

**ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԱՐԱԹՕՐՅԱԿ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 2017 թվականի օգոստոսի 13-ի N 01/12.2/4091-18 գրությունը՝ որոշում եմ.

1. Վերին Պտղնի համայնքի տարածքում 2018 թվականի սեպտեմբերի 8-ը հայտարարել շաբաթօրյակ:
2. Համայնքի տարածքում գտնվող կազմակերպությունների /կրթական հաստատություն, մասնավոր ընկերություններ/ ղեկավարներին՝ շաբաթօրյակի ընթացքում մաքրել և բարեկարգել իրենց կազմակերպությունների տարածքները և շրջակայքը:
3. Համայնքի տարածքում շաբաթօրյակի անցկացման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Յու.Գևորգյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿՎԱՐ



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայ աստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517570 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
17 ՕԳՈՍՏՈՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 110**

**ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱԿԵՐԹ
ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ*.

2018 թվականի օգոստոսի 21-ին ժամը 17:00 հրավիրել Վերին Պտղնի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.

1. Վերին Պտղնի համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2017 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ:
2. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
3. Ավագանու քննարկմանը ներկայացնել համայնքի տարածքում հուշարձան տեղադրելու հարցը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2018թ. օգոստոսի 17
գ.Վերին Պտղնի